

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՆԳ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Սեպտեմբերի 13-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Ուկրաինայի ՆԳ նախարար Նիկոլայ Բիլոկոնին՝ ՀՀ ոստիկանապետ Հայկ Հարությունյանի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում Հայկ Հարությունյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Ուկրաինայի ներքին գործերի նախարարության հետ հաստատված փոխգործակցությունը և իր գոհունակությունը հայտնեց վերջինիս արդյունավետության առնչությամբ:

Նորին Սրբությունը ողջունեց և բարձր գնահատեց երկու երկրների իրավապահ մարմինների համագործակցության ոգին՝ միաժամանակ կարևորելով նրանց աշխատանքը երկրի կայունության, օրինականության պահպանման, ինչպես նաև ընդհանուր մարտահրավերներին դիմագրավելու գործում: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետը հատկապես անդրադարձավ Եկեղեցիների կարևոր դերին և առաքելությանը մարդկության առջև ծառացած խնդիրների հաղթահարման գործում:

Շնորհակալություն հայտնելով Հայոց Հայրապետին ընդունելության համար՝ Ուկրաինայի ՆԳ նախարարն անդրադարձավ համատեղ ծրագրերին՝ հատկապես շեշտելով միասնական պայքարի անհրաժեշտությունն ահաբեկչության, թմրադեղերի շրջանառության և այլ խնդիրներում:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ վարդապետ Նալբանդյանը և ՀՀ-ում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Վ. Տյագլոն:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻՆ

Սեպտեմբերի 14-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ֆինլանդիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան տիկին Թերի Հակալային՝ Ֆինլանդիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վլադիմիր Կարմիրշալյանի ուղեկցությամբ:

Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքներն ուղղեց Ֆինլանդիայի նորանշանակ դեսպանին և արդյունավետ ծառայություն ցանկացավ իր նոր պաշտոնում: Նորին Սրբությունը, ողջունելով հայ-ֆիննական համագործակցությունը տարբեր ոլորտներում, հույս հայտնեց, որ այդ կապերն ու հարաբերություններն առավել պիտի ամրապնդվեն ու զորանան ի բարօրություն երկու պետությունների ու ժողովուրդների:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ նաև Ֆինլանդիայի Լյութերական Եկեղեցու պետ Արքեպիսկոպոս Ջուկկա Պաարմայի հրավերով Ֆինլանդիա կատարած իր այցելությանը:

Տիկին Հակալան, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, գոհունակությամբ նշեց այն բոլոր ծրագրերը, որոնք առավել պիտի սերտացնեն ու արդյունավետ դարձնեն երկու պետությունների միջև հաստատված հարաբերությունները:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՓՈԽԽՈՍՆԱԿ ԼԱՄԲԵՐՏՈ ԴԻՆԻԻՆ

Սեպտեմբերի 14-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Իտալիայի Հանրապետության Խորհրդարանի փոխխոսնակ և Իտալիայի խորհրդարանական խմբի անդամ Լամբերտո Դինիին՝ Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մարկո Կլեմենտեի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում խոսվեց ՆԱՏՕ-ի Խորհրդարանական Վեհաժողովի առաքելության, Հայաստանի հետ համագործակցության մասին:

Անդրադարձ եղավ նաև Հայ Առաքելական Եկեղեցու պատմությանը, ներկայիս գործունեությանն ու առկա մարտահրավերներին:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻՆ

Սեպտեմբերի 14-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ-ի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Մարշալ Էվանսին և հաջողություն մաղթեց դիվանագիտական նոր առաքելության մեջ:

Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց Հայաստանի անկախացումից ի վեր ԱՄՆ իշխանությունների ցուցաբերած աջակցությունն ու զորակցությունը մեր երկրին, ինչպես նաև այն հոգատար վերաբերմունքը, որ դրսևորվում է ամերիկաբնակ հայորդիների հանդեպ:

Նորանշանակ դեսպանը, ուրախություն հայտնելով Հայաստան իր նշանակման առիթով, հավաստիացրեց, որ պիտի ամեն ջանք գործադրի՝ իր առաքելությունը հաջող կերպով իրագործելու և նպաստելու հայ-ամերիկյան բարեկամության և համագործակցության առավել սերտացմանը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաև Հայոց Եկեղեցու կարևոր առաքելությանը հայ ժողովրդի կյանքում, ինչպես նաև հայոց պետականության ամրապնդման գործում:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻՆ

Սեպտեմբերի 15-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Հայկե Փայչին:

Ողջունելով նորանշանակ դեսպանին՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայաստանի և Գերմանիայի միջև ստեղծված ջերմ հարաբերություններին, Հայ Առաքելական Եկեղեցու անցած ուղուն և ներկայիս գործունեությանը: Նորին Սրբությունը նաև ուրախությամբ արձանագրեց, որ Մայր Աթոռի մի քանի միաբաններ իրենց աստվածաբանական բարձրագույն կրթությունը շարունակում են Գերմանիայի կրթական հաստատություններում:

Շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընդունելության համար՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանը նշեց, որ իր կարելին պետք է անի՝ էլ ավելի սերտացնելու հարաբերությունները երկու երկրների միջև, ինչպես նաև մասնակիցը դառնալու այն բոլոր ծրագրերին, որոնք միտված են Հայաստանի տնտեսական հզորացմանն ու Եվրախորհրդին ինտեգրմանը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՄԱՆՈ ՊՐՈԴԻԻՆ

Սեպտեմբերի 19-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ռոմանո Պրոդիին:

Հանդիպման ընթացքում Ռոմանո Պրոդին Վեհափառ Հայրապետին ներկայացրեց իրենց ծրագրերն ու տեսակետները՝ մասնավորապես շեշտելով Եվրախորհրդի հետաքրքրությունը մեր տարածաշրջանի նկատմամբ: Անդրադարձ եղավ նաև ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը:

Նորին Սրբությունը, բարի գալուստ մաղթելով Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ռոմանո Պրոդիին հայոց հոգևոր նվիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, անդրադարձավ մեր Եկեղեցու անցած ուղուն, ներկա մարտահրավերներին ու ապագա ծրագրերին, որոնք միտված են հայ հասարակության մեջ Հայոց Եկեղեցու առաքելության ամբողջական իրականացմանը:

Անդրադառնալով Եվրամիությանը Հայաստանի անդամագրությանը՝ Հայոց Հայրապետը նշեց. «Իր մտածողությամբ, իր հոգեբանությամբ, իր մտածելակերպով՝ հայ ժողովուրդը կրողն է եվրոպական արժեքային համակարգի, որի հիմքը քրիստոնեական արժեքներն են: Մենք էլ, որպես 1700-ամյա քրիստոնյա ժողովուրդ, շարունակում ենք կրել այդ արժեքները և իրականություն դարձնել դրանք մեր առօրյայում»:

Հանդիպմանը ներկա էին Անդրկովկասում պապական նվիրակ Կլաուդիո արքեպիսկոպոս Գուջջերոտտին, Եվրամիությունում հայկական ներկայացուցչության ղեկավար, դեսպան Վիգեն Չիտեչյանը, Հայաստանում և Վրաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության ղեկավար, դեսպան Տորբեն Հոլցը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ ՎԻԿՏՈՐ ՇԵՅՄԱՆԻՆ

Սեպտեմբերի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Բելառուսի Հանրապետության գլխավոր դատախազ Վիկտոր Շեյմանին՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը Հայոց Հայրապետին ներկայացրեց երկու երկրների դատախազությունների միջև առկա համագործակցության արդյունքները՝ նշելով, որ արդեն իսկ ստորագրվել է փոխգործակցության մասին համաձայնագիր, որն ավելի պիտի խթանի երկու երկրների միջև առկա հարաբերությունները:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը բարձր գնահատեց երկու երկրների համապատասխան գերատեսչությունների համագործակցությունը՝ իբրև նախկին խորհրդային հանրապետությունների միջև շարունակվող բարեկամության դրսևորում:

Բելառուսի Հանրապետության գլխավոր դատախազ Վիկտոր Շեյմանը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ընդունելության համար՝ անդրադառնալով ՀՀ գլխավոր դատախազության հետ ստեղծված ջերմ հարաբերություններին, ապագա ծրագրերին ու Բելառուսի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակին:

Հանդիպմանը ներկա էին ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մ. Դոլգոպոլովան և պաշտոնատար այլ անձինք:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻՆ

Սեպտեմբերի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Լեհաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Տոմաշ Կնոթհենին:

Վեհափառ Հայրապետը, բարի գալուստ մաղթելով դեսպանին հայոց հոգևոր նվիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ուրախությամբ նշեց այն ջերմ հարաբերությունների մասին, որոնք առկա են Հայաստանի Հանրապետության և Լեհաստանի Հանրապետության միջև՝ հույս հայտնելով, որ դրանք առավել պիտի զորանան ու ամրապնդվեն ի շահ մեր երկու ժողովուրդների բարօրության: Հայոց Հայրապետն անդրադարձավ նաև Հայ Եկեղեցու առաքելությանն ու առկա մարտահրավերներին:

Հայաստանի Հանրապետությունում Լեհաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Տոմաշ Կնոթհենն շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը ընդունելության համար՝ նշելով, որ իր կարելին պիտի անի՝ առավել ամրապնդելու այն կապերը, որ ստեղծված են հայ և լեհ ժողովուրդների միջև:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱԿ-Ի ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻՆ

Սեպտեմբերի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատար Փիթեր Նիկոլաուսին:

Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով պրն Նիկոլաուսին նոր նշանակման առիթով, բարձր գնահատեց գրասենյակի կողմից փախստականներին ցուցաբերած ծառայությունը:

Փախստականների գծով գերագույն հանձնակատարը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց գրասենյակի գործունեությունը և ապագա ծրագրերը:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ համագործակցության հնարավոր ծրագրերի մասին:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԵՎՄՏԱԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻՆ

Սեպտեմբերի 25-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Արևմտաեվրոպական միության վեհաժողովի փոխնախագահ, միությունում Իտալիայի պատվիրակության նախագահ Մարկո Զակկերանին՝ Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մարկո Կլեմենտեի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում խոսվեց ապագայի Հայաստանի՝ Եվրամիությանն անդամագրվելու հնարավորության, ինչպես նաև արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման անհրաժեշտության մասին:

Անդրադարձ եղավ և աշխարհասփյուռ հայության կյանքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությանը և գործունեությանը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ԴԱՇՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԳԵՅ ՄԻՐՈՆՈՎԻՆ

Հոկտեմբերի 2-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց ՌԴ Դաշնային ժողովի դաշնության խորհրդի նախագահ Սերգեյ Միրոնովին:

Բարի գալուստ մաղթելով Սերգեյ Միրոնովին Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ երկու ժողովուրդների և պետությունների միջև ստեղծված դարավոր բարեկամության ու կապերին՝ հույս հայտնելով, որ նման այցելություններով դրանք առավել պիտի զորանան ու ամրապնդվեն: Նորին Սրբությունը, ի դեմս ՌԴ Դաշնային ժողովի դաշնության խորհրդի նախագահի, իր ցավակցությունը հայտնեց Ռուսաստանի Դաշնության իշխանություններին Բեսլանում կատարված ողբերգության առիթով: Հայոց Հայրապետն իր խոսքում դատապարտեց յուրաքանչյուր գործողություն, որն ուղղված է մարդ արարածի դեմ:

Ռուսաստանի Դաշնային ժողովի դաշնության խորհրդի նախագահ Սերգեյ Միրոնովը շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին ընդունելության համար՝ անդրադառնալով Հայաստան կատարած իր այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումներին և ձեռք բերված պայմանավորվածություններին:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ Բեսլանի դեպքերի հետևանքով ռուս-վրացական պետական սահմանի փակման և խնդրի շուտափույթ կարգավորման անհրաժեշտության մասին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, ՀՀ ԱԺ փոխխոսնակ Վահան Հովհաննիսյանը, երկու երկրների դեսպանները և այլ պաշտոնատար անձինք:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՊԱՈՒԼՈ ԿՈԵԼՅՈՅԻՆ

Հոկտեմբերի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց բրազիլացի արձակագիր Պաուլո Կոելյոյին՝ ՀՀ գրողների միության նախագահ Լևոն Անանյանի ուղեկցությամբ:

Ողջունելով հանրաճանաչ գրողի այցը Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ նրա գրական ժառանգության և «Ալքիմիկոսը» գրքի հայերեն առաջին հրատարակությանը:

«Ուրախ ենք, որ Ձեր գիրքը հայերեն լեզվով հասու դարձավ հայ հասարակությանը: Դիպի ընթերցենք այն՝ առավել հաղորդ դառնալով ձեր մտածումներին, ձեր հոգեբանությանը: ... Ձեզ նման անձերն են, որ նպաստում են իրենց ծառայությամբ, որ մարդիկ պահպանեն իրենց արարչապետծ դեմքը»,- նշեց Վեհափառն իր խոսքում՝ մաղթելով բեղուն գրիչ և արդյունաշատ ծառայություն բազմավաստակ գրողին:

Պ. Կոելոն իր հերթին շնորհակալություն հայտնեց ընդունելության համար և իր խոսքում շեշտեց, որ իր համար նոր ներշնչանքի աղբյուր է դարձել հայ ժողովրդի պատմությունը:

«Այս այցը Հայաստան շատ կարևոր է և խորհրդանշական: Հայերեն այս թարգմանությամբ իմ հոգին ավելի է ուրախանում և ցնծում»,- նշեց հանրահայտ գրողը՝ պատրաստակամություն հայտնելով ծառայելու բազմադարյան մշակույթ ունեցող հայ ժողովրդին և հայցելով Նորին Սրբության Հայրապետական օրհնությունը:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև իր գնահատանքն ու օրհնությունը բերեց Պաուլո Կոելյոյի գրքի թարգմանիչներին ու հրատարակիչներին:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՊՀ ՄԽՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի անդամներին:

Արդյունավետ աշխատանք մաղթելով ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի անդամներին՝ Վեհափառ Հայրապետը կարևորեց հատկապես ահաբեկչության, թմրամոլության և մարդկությանն սպառնացող այլ չարիքների դեմ պայքարում միասնական ջանքերի մեկտեղումը: Նորին Սրբությունը նշեց, որ այդ համագործակցությունն անհրաժեշտ է նաև

մեր անկախացած երկրների տնտեսական առաջընթացի և ժողովուրդների բարօրության համար:

ՄԽՎ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վիկտոր Վոյտենկոն շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության համար՝ Նորին Սրբությանը ներկայացրեց համաժողովի աշխատանքներն ու ապագա ծրագրերը:

Վերջում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց ներկաների հարցերին:

Հանդիպմանը ներկա էին Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, ՀՀ ԱԺ Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի անդամ Հրայր Կարապետյանը, պաշտոնապար այլ անձինք:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հոկտեմբերի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Նորվեգիայի Թագավորության Արտաքին գործերի նախարար Յան Պետերսոնին՝ Նորվեգիայի Թագավորությունում ՀՀ դեսպան Վլադիմիր Կարմիրշալյանի և ՀՀ-ում Նորվեգիայի Թագավորության պատվո հյուպատոս Տիմոթի Սթրեյթի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը խոսեց Հայ Եկեղեցու անցած ուղու և ներկայիս մարտահրավերների մասին: Անդրադառնալով երկու երկրների կապերին, Նորին Սրբությունը երախտագիտությամբ նշեց 1915 թ. Հայոց եղեռնի և 1988 թ. երկրաշարժի օրերին հայ ժողովրդին Նորվեգիայի ցուցաբերած աջակցությունը: Հայոց Հայրապետը անդրադարձավ նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Նորվեգիայի Եկեղեցու առկա հարաբերություններին:

Շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության համար՝ Յան Պետերսոնը հույս հայտնեց, որ իր այս այցելությամբ երկու պետությունների միջև հարաբերություններն ու կապերն առավել կսերտանան և կարդյունավորվեն:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հոկտեմբերի 19-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի նախարար Լի Չժաոսինին և նրան ուղեկցող պատվիրակությանը:

Բարի գալուստ մաղթելով Չինաստանի արտաքին գործերի նախարարին հայոց հոգևոր կենտրոն Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայ Առաքելական Եկե-

ղեցու անցած ուղուն, դեռևս վաղ միջնադարում ձևավորված հայ-չինական կապերին և ողջունեց երկու երկրների միջև օրեցօր աճող համագործակցությունը տարբեր ոլորտներում: Նորին Սրբությունն ընդգծեց, որ օրեցօր զարգացում ապրող Չինաստանի հետ սերտ հարաբերությունները շահավետ կլինեն երկու ժողովուրդների համար և կամրապնդեն նաև նույնական տառապանքների միջով անցած երկրների պետականության հիմքերը:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի նախարար Լի Չժաոսինը շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին ընդունելության համար՝ նշելով, որ իր համար մեծ պատիվ է լինել հարուստ պատմություն և մշակույթ ունեցող Հայաստան երկրում և հյուրընկալվել Ամենայն Հայոց Հայրապետի կողմից: Նա իր խոսքում արձանագրեց, որ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի Չինաստան կատարած պաշտոնական այցից հետո նոր որակ և ձև են ստացել հայ-չինական հարաբերությունները՝ կարևորելով համագործակցությունը մարդկությանը հուզող զանազան խնդիրներում: Անդրադառնալով հայ-չինական պատմական անցյալին՝ Լի Չժաոսինն ուրախությամբ նշեց, որ չնայած Հայաստանն իր տարածքով փոքր երկիր է, սակայն մեծ է նրա տաղանդավոր զավակների ներդրումը համաշխարհային քաղաքակրթության գանձարանում՝ ընդգծելով, որ միջնադարում առաջին անգամ Աստվածաշունչ մատյանը չինարեն է թարգմանվել հենց հայ մարդու շնորհիվ:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Միջխորհրդարանական համագործակցության բրիտանական խմբի անդամներին՝ Մեծ Բրիտանիայի Խորհրդարանի համայնքների պալատի պատգամավոր Գորդոն Մարսդենի գլխավորությամբ:

Բարի գալուստ մաղթելով հյուրերին Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ հայ-բրիտանական կապերին, Հայ Առաքելական Եկեղեցու առաքելությանն ու արդի մարտահրավերներին:

Պատասխան խոսքում Գորդոն Մարսդենը շնորհակալություն հայտնեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընդունելության համար՝ կարևորելով Հայոց Եկեղեցու դերը համայն հայության միավորման գործում: Նա հույս հայտնեց, որ այս այցն էլ ավելի պիտի հարստացնի իրենց պատկերացումը Հայաստանի ու նրան հուզող խնդիրների մասին, ամրապնդի հայ-բրիտանական կապերը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաև տարածաշրջանային խնդիրներին, ԼՂՀ խաղաղ կարգավորման գործում Հայոց Եկեղեցու դիրքորոշմանն, ինչպես նաև միջնադարյան եկեղեցիների պահպանության խնդրին:

Վերջում Հայոց Հայրապետը պատասխանեց հյուրերի հարցերին:

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՌՈԲԵՐՏ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻՆ

Հոկտեմբերի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ կոմպոզիտորների միության նախագահ Ռոբերտ Ամիրխանյանին և նրան ընկերակցող օպարերկրյա մշակութային գործիչներին:

Ռ. Ամիրխանյանը, շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության համար, շնորհավորեց Գարեգին Բ Կաթողիկոսին ընտրության 5-րդ տարեդարձի առիթով և մաղթեց երկար և արդյունաշատ օրեր: Հայոց Հայրապետի ընտրության տարեդարձի կապակցությամբ կոմպոզիտորը Նորին Սրբությանն ընծայեց «Հայր մեր»-ի իր նոր մշակումը՝ ներկայացնելով Տերունական աղոթքի իր մշակման առանձնահատկությունները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունելով հյուրերին՝ բարձր գնահատեց Ռ. Ամիրխանյանի մշակութային բեղուն գործունեությունն ու անմնացորդ սերը հայրենիքի ու Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ:

«Ուրախ ենք ունենալու համար Ռոբերտ Ամիրխանյանի ստեղծագործական մի նոր դրսևորում եկեղեցական երաժշտության ասպարեզում: Խորհրդանշական է մտահղացումը՝ հատկապես այս օրը մեզ իր ստեղծագործությունը ընծայաբերելու, երբ ծանր ողբերգություն ապրեց մեր ժողովուրդը՝ կորցնելով քաղաքական ասպարեզի իր նվիրյալ զավակներին: Եվ խորհրդանշական ենք տեսնում, որ այսօր հենց այս աղոթքն է իր երաժշտական նոր տարբերակով ներկայացվում մեզ, որը հավատացյալ հոգուց առ Աստված բարձրացող այսօրվա համար ամենահամահունչ աղոթքն է: Մի աղոթք, որով հայցում ենք Տիրոջ ամենախնամ ողորմությունը և նրա պահպանությունը մեզ և համայն աշխարհի համար»,- նշեց Նորին Սրբությունը:

Վերջում Հայոց Հայրապետը պատասխանեց ներկաների հարցերին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*